

14

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

2019

Luys



Lnyu®

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ
«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ
ՈՒՆԵՅՈՂ ԳՈՒՅՔԻ
ԲՈՒՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. «ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ և ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ	1
2. ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	2
2.1. Հետադարձ ուժը.....	2
2.2. Դդատախազությունը՝ որպես իրավասու մարմին	4
2.3. Անմեղության կանխավարկածի սկզբունքը.....	6
2.4. Թիրախավորվող հանցագործությունները	8
2.5. Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ընթացակարգը.....	8
3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	12
3.1. Միջազգային իրավական կարգավորումները	12
3.2. Առանձին երկրների փորձառությունը	15
3.3. Թիրախավորվող հանցագործությունների տեսակները	17
3.4. Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ընթացակարգը միջազգային պրակտիկայում	18
3.5. Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի մոտեցումը.....	20
4. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ	22
5. ՀԱՎԵԼՎԱԾ	23
5.1. Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման օրենսդրական կարգավորումների համեմատական վերլուծություն (Հայաստան և Վրաստան).....	23
5.2. Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման օրենսդրական կարգավորումների համեմատական վերլուծություն (Հայաստան և Բուլղարիա)	27

1.«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

2019թ. սեպտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հրապարակվել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի (այսուհետ՝ Նախագիծ) և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը¹:

- Նախագիծը կարգավորում է ապօրինի ծագում ունեցող գույքի՝ առանց մեղադրական դատավճռի բռնագանձման վարույթի հետ կապված հարաբերությունները:
- Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և Նախագծով սահմանված կարգով:
- Նախագծի իմաստով գույք է համարվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածով նախատեսված գույքը և կրիպտոակտիվները:
- Նախագծի իմաստով ապօրինի ծագում ունեցող գույք է համարվում այն գույքը, որի ձեռքբերումը նախագծով նախատեսված կարգով չի հիմնավորվում օրինական եկամուտներով՝ անկախ Նախագծի ուժի մեջ մտնելուց առաջ կամ հետո ձեռք բերված լինելու հանգամանքից:
- Նախագծով նախատեսված վարույթի հարուցման համար հիմք են հանդիսանում ենթադրվող հանցագործությունների լայն շրջանակ:
- Նախագծով նախատեսված վարույթի իրականացման համար իրավասու մարմին է նախատեսվում ՀՀ գլխավոր դատախազությունը:
- Իրավասու մարմինը չի նախաձեռնում ուսումնասիրություն, եթե առկա են բավարար հիմքեր ենթադրելու, որ ուսումնասիրության արդյունքներով հայտնաբերված ապօրինի ծագում ունեցող գույքն իր շուկայական արժեքով չի կարող գերազանցել 50.000.000 ՀՀ դրամը:
- Գույքի օրինականության ստուգման ուսումնասիրություններ սկսելու համար նախատեսվում են հետևյալ հիմքերը.

¹ Նախագծերը հասանելի են նախագծերի հրապարակման միասնական կայքում (<https://www.e-draft.am/projects/1931>), այցելվել է 10.09.2019թ.:

- ✓ առկա է օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ, որով հաստատվում է նախագծով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարումը,
- ✓ հարուցված քրեական գործով անձը որպես մեղադրյալ է ներգրավվել նախագծով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման համար,
- ✓ առկա են բավարար հիմքեր կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն անձի առնչությամբ քրեական հետապնդումը կամ քրեական գործի հարուցումն անհնարին է նախագծով նախատեսված հիմքերից մեկով,
- ✓ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված տվյալներով առկա են բավարար հիմքեր կասկածելու, որ պաշտոնատար անձի կողմից ձեռք է բերվել ապօրինի ծագում ունեցող գույք:
- Գործի համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման համար Նախագծով ներդրվում է «հավանականությունների հավասարակշռում» (balance of probabilities) ապացուցողական չափանիշը: Սա ընդհանուր իրավունքի (common law) համակարգից փոխառված եզրույթ է, որը նախատեսում է ապացուցման ավելի ցածր շեմ:
- Վարույթը կարող է ավարտվել հաշտության համաձայնությամբ, որի դեպքում կարող է սահմանվել բռնազանձման ավելի ցածր շեմ, բայց ոչ պակաս, քան ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության տվյալներով ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքի 75 տոկոսը:
- Նախագիծն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

2. ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2.1. Հետադարձ ուժը

- Նախագծի 3-րդ հոդվածի 12-րդ կետով Նախագծի գործողությունը տարածվում է «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հանրային պաշտոն զբաղեցնող կամ զբաղեցրած անձ կամ այդպիսի պաշտոնին համարժեք պաշտոն զբաղեցրած անձ: Ըստ այդմ՝ Նախագծին տրվում է հետադարձ ուժ՝ տարածվելով այն անձանց վրա, ովքեր ընկնում են «պաշտոնատար անձ» հասկացության տակ, անգամ եթե այդպիսին են եղել մինչև Նախագծի ուժի մեջ մտնելը: Նախագծի կարգավորումներից բխում է նաև, որ «պաշտոնատար անձ» հասկացության շրջանակը կարելի է միշտ էլ ընդլայնել՝ դրանով իսկ հետադարձ ուժով օրենքի գործողությունը տարածելով անձանց ավելի լայն շրջանակի վրա:

- Հարց է առաջանում՝ արդյո՞ք առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը կարող է կիրառվել հետադարձ ուժով, այսինքն՝ մինչև այս ինստիտուտի ներդրումը ձեռք բերված գույքի նկատմամբ: ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածը արգելում է *անձի իրավական վիճակը* վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը:
- Սահմանադրության հիման վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը նույնպես լայն սահմանում է տալիս հետադարձ ուժի արգելքին՝ այն տարածելով դատավարության մասնակիցների իրավունքները վերացնող կամ սահմանափակող, ինչպես նաև նրանց վիճակն այլ կերպ վատթարացնող քրեական դատավարական օրենքների վրա:
- Իր հերթին՝ ՀՀ Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1224 որոշման մեջ նշել է, որ «հետադարձ ուժի արգելման սկզբունքը վերաբերելի է միմիայն այն դեպքերին, եթե անձը գտնվելով արդեն իսկ օրենքով կարգավորված հարաբերությունների մեջ, ունենալով որոշակի իրավունքներ և պարտականություններ, օրենքի փոփոխման պատճառով նրա իրավական վիճակը վատթարանում է, նա զրկվում է իրավունքներից կամ սահմանափակվում է այդ իրավահարաբերությունների ուժով նրա իրավունքի իրացումը»:
- Մի կողմից, ապացուցման բեռի տեսանկյունից որոշակի վատթարացում անձի իրավական վիճակում թերևս տեղի ունենում է: Մյուս կողմից, եթե արարքը արդեն իսկ քրեորեն պատժելի է եղել մինչև առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի ներդրումը, ապա այս պարագայում, սկզբունքորեն, դժվար է պնդել, որ տեղի է ունենում անձի իրավական վիճակի վատթարացում: Դրա տակ պետք է հասկանանք ոչ թե ցանկացած իրավական վիճակի փոփոխություն, այլ՝ ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված հիմնական իրավունքների վիճակի վատթարացումը:
- Բայց չպետք է մոռանալ, որ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի պարագայում խոսքը քաղաքացիական և ոչ թե քրեական վարույթի մասին է:
- Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի ներդրումը, այնուամենայնիվ, կարող է մեկնաբանվել որպես ավելի շուտ դատավարական, ընթացակարգային փոփոխություն՝ արարքի բացահայտման և պատասխանատվության հարցում, քան նյութական²: Մյուս կողմից՝ ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածը հետադարձ ուժին արգելքը տարածում է *անձի իրավական վիճակը* վատթարացնող բոլոր իրավական ակտերի վրա, այսինքն՝ ունի ավելի լայն բովանդակություն, քան նույն ՄԻԵԴ 7-րդ հոդվածը:

² Նման մոտեցում է արտահայտել նաև Սերբիայի վերաբերյալ իր կարծիքում եխ փորձագետը: Տե՛ս Arvinder Sanbei, նշվ. աշխ., էջ 15:

Վերջինս արգելում է հետադարձ ուժը միայն արարքի քրեականացմանը վերաբերող հարցերում: Այս առումով, *Walsh v UK*³ գործով, որտեղ գույքի բռնագանձման օրենսդրությունը հետադարձ ուժով է կիրառվել, ՄԻԵԴ-ը դա չի դիտարկել որպես խախտում՝ նշելով, որ խոսքը այս պարագայում քրեական սանկցիայի կիրառման մասին չէ, այլ քաղաքացիական վարույթի:

2.2. Դատախազությունը՝ որպես իրավասու մարմին

- Նախագծով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցերով իրավասու մարմին է նախատեսվում ՀՀ գլխավոր դատախազությունը: Նախ՝ հարց է, թե որքանով է դա համադրելի դատախազության սահմանադրական լիազորությունների հետ, որոնք սահմանված են ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածով: Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասը պետական շահերի պաշտպանության հայցի հարուցումը դիտարկում է ոչ թե որպես դատախազության ստանդարտ գործառույթ, այլ որպես *բացառիկ* դեպքերում իրականացվող գործառույթ, իսկ այդ դեպքերի շրջանակն ու այդ գործառույթի իրականացման ընթացակարգը պետք է հստակեցվեն «Դատախազության մասին» օրենքով: Դատախազության կողմից նման գործառույթի իրականացումը միայն խիստ որոշակի և բացառիկ դեպքերում շեշտադրվել է նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից՝ 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության վերաբերյալ կարծիքում⁴:
- Պետական շահերի պաշտպանության հարցում դատախազության գործառույթների խիստ սահմանափակումը մեծապես պայմանավորված է եղել դեռևս խորհրդային դատախազության ընդհանուր վերահսկողության գործառույթից հրաժարվելով և դատախազությանը հիմնականում քրեական վարույթում հսկողական և մեղադրանքի պաշտպանության գործառույթներ վերապահելու նպատակներով: Այս մոտեցումը ընդգծվել է դեռևս 1995թ. ընդունված ՀՀ Սահմանադրությամբ, իսկ 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունն ավելի է ընդգծել դատախազության այս գործառույթի *բացառիկ* բնույթը՝ այդ մասին ուղղակիորեն մատնանշելով սահմանադրական նորմի տեքստում (հոդված 176, մաս 3):
- Ի կատարումն սահմանադրական պահանջների՝ «Դատախազության մասին» օրենքի⁵ 29-րդ հոդվածի 2-րդ մասը մանրամասնում է բացառիկ դեպքերի այս շրջանակը: Դրանց վերլուծությունը ակնհայտ է դարձնում, որ խոսքը այս պարագայում այնպիսի իրավիճակների մասին է, երբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իրենց վերապահված կամ

³ Application no. 43384/05 (November 2006):

⁴ St' u CDL-AD(2015)038, Second Opinion On The Draft Amendments To The Constitution (In Particular To Chapters 8, 9, 11 To 16) Of The Republic Of Armenia, կետ 55:

⁵ Ընդունվել է 2017 թվականի նոյեմբերի 17-ին, ՀՀՊՏ 2017.12.13/74(1349) Հոդ.1213, ՀՕ-198-Ն:

պատվիրակված գործառույթների իրականացման արդյունքում պետությանը պատճառվել է վնաս և համապատասխան մարմինը, իրազեկ լինելով պետական շահերի խախտման փաստի մասին, հայց չի ներկայացնում, կամ հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի: Մինչդեռ Նախագծով կարգավորվող իրավահարաբերությունների առումով հնարավոր չէ պնդել, որ վնասը պատճառվել է պետության գույքային շահերին, այլ խոսքը հանրորեն վտանգավոր արարքի և հանրային շահերին հասցվող վնասի մասին է:

- Հատկանշական է, որ Ազգային ժողովում 2017թ. «Դատախազության մասին» օրենքի ընդունման ժամանակ տեղի ունեցած քննարկումների ընթացքում⁶ գլխավոր դատախազը, պարզաբանելով պետական շահի պաշտպանության գործառույթի էությունը, նշել է, որ «ընդհանրապես պետական շահի պաշտպանությունը լայն հասկացություն է, բայց դատախազական հսկողության և դատախազական ֆունկցիայի տեսակետից դա վերաբերում է բացառապես պետության գույքային իրավունքների պաշտպանությանը, ... քանի որ պետական շահի այլ դրսևորումների պաշտպանությունը պետական այլ մարմինների գործառույթների մեջ է մտնում» և ընդգծել, որ «պետական շահի պաշտպանության հայց հարուցելու դատախազական լիազորությունը բացառապես վերաբերում է այն դեպքերին, երբ որ որևէ սուբյեկտ չի կատարել իր պարտականությունները պետության առջև և այդ պարտավորությունների կատարման համար պատասխանատու սուբյեկտը, օրինակ՝ այս կամ այն պետական ծառայողը, պետական մարմինը կամ որոշ դեպքերում նաև համայնքային ծառայողները չեն կատարել իրենց պարտավորությունը՝ դատարան դիմելու առումով»:
- Մինչդեռ Նախագծում որևէ կերպ չի հիմնավորվում, թե ինչպե՞ս է դատախազությանը վերապահվող այս նոր գործառույթը տեղավորվում պետական շահերի պաշտպանության նրա սահմանադրական գործառույթների մեջ: Նախագծին կից Հիմնավորման 10-րդ կետում նշվում է միայն, որ «քրեական գործընթացներից անկախ՝ ներկայումս պետությանը պատճառված վնասը կարող է վերականգնվել քաղաքացիական դատավարության կարգով պետական շահերի պաշտպանության հայցի հարուցմամբ»:
- Ավելին, Նախագծին կից Հիմնավորման 14-րդ կետում նշվում է, որ «վնասի հատուցման պահանջի քննությունը ենթադրում է վնասի տարրերի առկայություն, իսկ հանցավոր ճանապարհով ակտիվների ստացումը կարող է

⁶ Հասանելի է հետևյալ հղումով՝

<https://www.panorama.am/am/news/2017/10/04/%D4%BF%D5%B8%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6-%D4%B9%D5%B8%D5%BE%D5%B4%D5%A1%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6/1844439:>

ուղղակիորեն չհանդիսանալ պետությանը պատճառված վնաս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով»։ Այս փաստը ևս մեկ անգամ վերահաստատում է այն հանգամանքը, որ դատախազությանը նման գործառույթ տրամադրելը դուրս է վերջինիս Սահմանադրությամբ սահմանված պետական շահերի պաշտպանության հայցի հարուցման լիազորությունից։

- Եվրոպայի խորհուրդը իր փաստաթղթերում նույնպես ընդգծում է, որ ի տարբերություն քրեական արդարադատության ոլորտում դատախազության առանցքային դերի, եթե անգամ ԵԽ անդամ երկրները քաղաքացիական և վարչական ոլորտում նախատեսում են դատախազության մասնակցություն՝ պատմական, արդյունավետության և տնտեսական պատճառներով, դատախազների դերը, այնուամենայնիվ, պետք է լինի բացառիկ (բացառիկության սկզբունք)։ Դատախազի մասնակցությունը քաղաքացիական և վարչական ոլորտներին պետք է լինի սահմանափակ և միշտ լավ հիմնավորված, որոշակի հստակ նպատակ հետապնդող⁷։
- Վերոհիշյալի համատեքստում նաև մեկ այլ սահմանադրական խնդիր է ծագում. Սահմանադրության 178-րդ հոդվածի առանձին հոդվածով սահմանում է քննչական մարմինների կարգավիճակը։ Նախագծով դատախազությանը վերապահվող այս նոր գործառույթները, որոնք, ըստ էության, իրենց բնույթով քննչական են, խախտում են քննչական մարմինների սահմանադրական իրավասությունների ոլորտը։

2.3. Անմեղության կանխավարկածի սկզբունքը

- Որքան էլ Նախագծով առաջարկվող գործընթացը չներկայացվի որպես քաղաքացիական դատավարության շրջանակներում տեղի ունեցող իրավահարաբերություն, գործընթացը իր էությամբ և բնույթով մնում է հանրային իշխանական հարաբերություններով ծանրաբեռնված և «քվադիքրեական»՝ դրանով իսկ առաջ բերելով վարույթի մյուս կողմի իրավունքների հատուկ պաշտպանության անհրաժեշտություն։ Մինչդեռ քաղաքացիական դատավարությունը կառուցվում է կողմերի լիարժեք մրցակցության սկզբունքի վրա, որի պայմաններում դժվար է խոսել Նախագծով նախատեսված խոցելի իրավահարաբերության ոլորտում կողմի բավարար դատավարական պաշտպանվածության մասին։ Ընդհանրապես, Նախագիծը լայն դաշտ է բացում անմեղության կանխավարկածի հիմնական սահմանադրական իրավունքի անտեսման և քրեական վարույթից դուրս և քրեադատավարական երաշխիքների անտեսմամբ լայնորեն գույքի

⁷ St' u Council of Europe, Bureau Of The Consultative Council Of European Prosecutors, Role of the public prosecution service outside the field of criminal justice, CCPE-Bu (2008)4rev., Strasbourg, 5 May 2008, Annex 1, էջ 19, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/bureau-of-the-consultative-council-of-european-prosecutors-ccpe-bu-rol/168071f586>:

բռնագանձման վարույթ սկսելու համար: Այս առումով, Սահմանադրական դատարանը ՄԴՌ-1270⁸ որոշմամբ անդրադառնալով անմեղության կանխավարկածին՝ նշում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ անմեղության կանխավարկածը «կիրառվում է, երբ անձը մեղադրվում է քրեական հանցագործության կատարման մեջ»:

- Թեև ՄԻԵԴ-ի պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՄԻԵԴ-ը համադրելի է համարում առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագրավումը անմեղության կանխավարկածի և սեփականության իրավունքի հետ, այդուհանդերձ, պետք է նկատի ունենալ, որ ՀՀ Սահմանադրությունը ՄԻԵԿ-ից որոշակիորեն տարբերվող կարգավորումներ է նախատեսում նշված երկու հիմնական իրավունքների մասով:
- Սահմանադրության 66-րդ հոդվածը բավական հստակ և խիստ կարգավորում է պարունակում անմեղության կանխավարկածի վերաբերյալ՝ սահմանելով, որ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ *օրենքով սահմանված կարգով*՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»: Սահմանադրության նշված նորմից հստակ երևում է, որ մեղքի ապացուցման բեռը դրված է պետական մարմնի վրա: Սակայն, այդ մեղքի ապացուցման ընթացակարգի առումով, Սահմանադրությունը նախատեսում է օրենքի վերապահում, այսինքն՝ մեղքի ապացուցման դատավարական ընթացակարգի մանրամասնումը թողնում է օրենքին: Քանի որ Սահմանադրությունը հստակ մատնանշում է «*օրենքով սահմանված կարգով*» մեղքի ապացուցման մասին, նշված նորմը հիմք չի տալիս պնդելու, որ օրենքով կարող են բացառություններ նախատեսվել մեղքի ապացուցման «*դեպքերի*» համար, երբ մեղքի ապացուցման պարտականությունը դրվի մեղադրյալի վրա:
- Միաժամանակ, սեփականության իրավունքին վերաբերող 60-րդ հոդվածի *կարգավորումները* նույնպես տարբերվում են ՄԻԵԴ-ի 1-ին արձանագրության 1-ին հոդվածից: Վերջինս հնարավոր է համարում սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողության սահմանումը պետության օրենսդրությամբ՝ հանրային շահերից ելնելով, որին ՄԻԵԴ-ը հղում է արել *Arcuri v. Italy* գործով՝ սեփականության իրավունքի նկատմամբ միջամտությունը արդարացնելու համար⁹: ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասը սեփականությունից զրկելու համար նախատեսում է հստակ դատական ընթացակարգ:

⁹ 12954/87, 22nd February 1994:

2.4.Թիրախավորվող հանցագործությունները

- Նախագիծը նախատեսում է թիրախավորվող հանցագործությունների բավական լայն շրջանակ, այդ թվում՝ ընտրողներին կաշառք տալը, վարկը ոչ նպատակային օգտագործելը, առևտրային կաշառքը, ձեռնարկատիրական գործունեությանը ապօրինի մասնակցելը, արհեստավարժ մարզամրցումներին և հանդիսավոր առևտրային մրցումների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելը: Նման արարքները վերացական եզրեր ունեն այն հանցատեսակների հետ, որոնց պարագայում է միջազգային պրակտիկայում¹⁰ սովորաբար թույլատրելի և հիմնավորված է համարվում գույքի բռնագանձման այս արտակարգ մեխանիզմի կիրառումը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը և միջազգային մի շարք կազմակերպությունների՝ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը արդարացվում է այնպիսի մեծ հանրային վտանգավորություն ունեցող հանցատեսակների դեմ պայքարի անհրաժեշտությամբ, ինչպիսիք են թրաֆիքինգը, թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, փողերի լվացումը և ահաբեկչության ֆինանսավորումը, որոնց դեմ պայքարում իրավամբ անհրաժեշտ են լրացուցիչ գործիքակազմեր:
- Մինչդեռ Նախագծով հանցատեսակների լայն շրջանակ նախատեսելը կարող է խնդրահարույց լինել՝ հաշվի առնելով նաև անձի հիմնական իրավունքներին միջամտության այն լայն հնարավորությունները, որը Նախագծով նախատեսվում է:

2.5.Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ընթացակարգը

- Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձումը Նախագծով հնարավոր է համարվում քրեական վարույթին զուգահեռ և անգամ դրանից անջատ (տե՛ս հոդված 10), ինչը խնդրահարույց է: Միջազգային պրակտիկայում առանց մեղադրական դատավճռի բռնագրավումը դիտարկվում է որպես **բացառիկ միջոց** այն դեպքերի համար, երբ **քրեական հետապնդումն անհնարին կամ դժվար է**¹¹ մի շարք հանգամանքների պատճառով, որոնք թույլ են տալու անձին խուսափել քրեական հետապնդումից: Անգամ արդարացման դատավճռի կայացումը կամ քրեական հետապնդումը արդարացնող հիմքով դադարեցնելը հիմք չի դիտվում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի դադարեցման համար (հոդված 10, մաս 5):

¹⁰ Այս մասին առավել մանրամասն տե՛ս միջազգային փորձի ուսումնասիրության մասում:

¹¹ Տե՛ս Council of Europe, Technical Paper: European Court On Human Rights Jurisprudence And Civil Recovery Of Illicitly Obtained Assets (Confiscation In Rem), ECU/CAR-02/2012, էջ 15, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://rm.coe.int/16806ebc98>:

- Այս առումով, Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1270 որոշմամբ անդրադառնալով նվիրատվության վերացմանը՝ որպես քաղաքացիաիրավական սանկցիա, մեջբերում է ՄԻԵԴ-ի դիրքորոշումը, համաձայն որի անկախ այն հանգամանքից, թե քրեական դատավարություններն ավարտվել են կարճմամբ կամ արդարացմամբ, քրեական պատասխանատվությունից ազատումը չպետք է խոչընդոտի ապացուցման նվազ բեռի հիմքով նույն փաստերից ծագող փոխհատուցում վճարելու քաղաքացիական պատասխանատվության սահմանմանը¹²: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) Vella v. Malta¹³ գործով նշում է, որ քրեական դատավարության ընթացքում տարբեր երաշխիքներ են գործում մեղադրյալի օգտին, և հնարավոր է, որ նա անմեղ ճանաչվի ոչ բավարար ապացույցներ լինելու պատճառով, բայց չի կարող մյուս կողմին զրկել ապացուցման այլ բեռով հատուցում պահանջելու համար դատարանի մատչելիության հնարավորությունից: ՄԻԵԴ-ը գտել է, որ նման լայն մեկնաբանությունը ոչ միայն չի բխում անմեղության կանխավարկածի վերաբերյալ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 2-րդ պարբերությունից, այլև ընդհանուր հիմք չունի Եվրախորհրդի անդամ երկրների իրավական համակարգերում, այլապես քրեական գործի կարճումը կամ ամբաստանյալի արդարացումը կարող է հանգեցնել տուժողի՝ քաղաքացիական գործով դատարան դիմելու իրավունքի կամայական կամ անհամաչափ սահմանափակման: Սակայն վերոհիշյալ գործերից ակնհայտ է, որ խոսքը, նախ և առաջ, պատշաճ կարգով քրեական վարույթ իրականացնելու և հետո միայն՝ քաղաքացիական դատավարության կարգով գույքի բռնագանձման մասին է, և ոչ թե քրեական վարույթը քաղաքացիականով փոխարինելու հնարավորության:
- Նախագծի 5-րդ հոդվածով ուսումնասիրության հիմք կարող են լինել ոչ միայն օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, այլ օրինակ՝ անձին որպես մեղադրյալ ներգրավվելը: Նույն 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ուսումնասիրություն սկսելու համար հիմք է բավարար տվյալների առկայությունը, որոնց հիման վրա կարելի է ենթադրել, որ ձեռք է բերվել ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն նախագծով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման առնչությամբ քրեական գործի հարուցումն անհնարին է, օրինակ՝ վաղեմության ժամկետի անցման կամ համաներման մասին օրենքի ընդունման արդյունքում: Շատ խնդրահարույց է «բավարար տվյալների առկայությունը» ձևակերպումը, քանի որ սահմանված չէ, թե որ դեպքում են տվյալները համարվում բավարար և որ դեպքում՝ ոչ: Տվյալ

¹² St'u նաև Ringvold v. Norway, թիվ 34964/97, կետ 36, ՄԻԵԴ 2003-II, Y. v. Norway, թիվ 56568/00, կետ 39:

¹³ St'u Vella v. Malta , թիվ 69122/10, 11.02.2014, կետ 28:

պարագայում դատախազությանը տրվում է կամայական ուսումնասիրություններ իրականացնելու շատ լայն հնարավորություն:

- Նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ուսումնասիրություն սկսելու հիմքերից մեկը պաշտոնատար անձի վերաբերյալ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված տվյալներն են: Այսինքն, անգամ, եթե չկա դեռևս հարուցված քրեական գործ, հնարավոր է դառնում Նախագծով նախատեսված վարույթի հարուցումը և առնվազն՝ անձի վերաբերյալ նրա մասնավոր կյանքին միջամտող տեղեկությունների հավաքագրումը:
- Նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ մասից թերևս պարզ չէ նաև, թե արդյո՞ք կատարված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում գույքի ծագման ապօրինի լինելու մասին տեղեկատվություն ստանալու դեպքում իրավասու մարմնի կողմից հարուցվելու է քրեական գործ, թե գործի հարուցումը կարող է շրջանցվել ու փոխարինվել Նախագծով նախատեսված վարույթով: Մինչդեռ, ինչպես վերը նշվեց, միջազգային փորձի ուսումնասիրությունը¹⁴ ցույց է տալիս, որ այն երկրներում, որտեղ ներդրված է նման ինստիտուտ, այն կիրառվում է որպես իրավամբ բացառիկ միջոց՝ որևէ դեպքում չփոխարինելով քրեական վարույթին:
- Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի ներկայացման համար անհրաժեշտ հիմքերի առկայության ուսումնասիրության ժամանակահատվածը չի կարող գերազանցել 10 տարին: Նշված կարգավորումը խնդրահարույց է իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից, քանի որ, եթե անձը անցյալում որոշակի գործողություն է կատարել, ապա նրա համար պետք է կանխատեսելի լիներ, որ նման արարքը կարող է պատասխանատվության ենթարկվելու հիմք դառնա:
- Նախագծի կարգավորումներով, անձի գույքի ողջ ուսումնասիրության գործընթացը կատարվում է առանց նրա իմացության (տե՛ս հոդված 16), ինչը մեծ ռիսկեր է ստեղծում նրա իրավունքների ոտնահարման և անձի վերաբերյալ անհարկի տվյալների հավաքագրման ու պահման համար: Հաշվի առնելով տվյալների այն ողջ բազան, որին հնարավոր է մուտք ստանալ Նախագծով նախատեսված ուսումնասիրության գործընթացում (հոդված 12), անձի անձնական տվյալների և մասնավոր կյանքի սահմանադրական իրավունքները անտեսվում են: Ստացվում է նաև, որ եթե ուսումնասիրության արդյունքներով դատախազությունը որոշի, որ պետք է վարույթը դադարեցվի, որևէ հետևանք չի առաջանում, և անձը այս պարագայում անգամ չի ծանուցվում այն մասին, որ

¹⁴ Այս մասին տե՛ս ստորև՝ միջազգային փորձի վերլուծության մասում:

իր նկատմամբ նման գործընթաց է սկսված եղել, քանի որ 16-րդ հոդվածի 1-ին մասը ծանուցման պարտականությունը նախատեսում է միայն հայցի նախնական ապահովման միջոցների կիրառումից և անհրաժեշտ ապացույցների նախնական ապահովումից հետո:

- Միաժամանակ, Նախագիծը չափազանց լայն դաշտ է բացում դատախազության համար ցանկացած անձի մասին, ցանկացած տեղեկություններ հավաքելու առումով, այդ թվում՝ բանկային և առևտրային գաղտնիք կազմող: Նախագծի 12-րդ հոդվածով անձի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու շրջանակում իրավասու մարմինն տրված է լիազորություն՝ ստանալու բանկային և հարկային գաղտնիք համարվող տեղեկություններ: Մինչդեռ «Բանկային գաղտնիքի մասին» գործող օրենքի 10-րդ հոդվածով բանկային գաղտնիք համարվող տեղեկություններ կարող են տրվել միայն կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձանց վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա:
- Խնդրահարույց են նաև Նախագծի 23-րդ հոդվածում տեղ գտած հաշտության համաձայնության վերաբերյալ կարգավորումները: Մասնավորապես անհասկանալի է, թե ինչ հանգամանքների առկայության դեպքում է հնարավոր հաշտության համաձայնության կնքումը, և Նախագծով չի պարզաբանվում, թե համաձայնության գալու դեպքում ինչպես է փոխվելու այն անձի դրությունը, ում նկատմամբ հարուցվել է հայցը: Նշված հանգամանքները հիմք են տալիս ենթադրելու, որ նախատեսվող կարգավորումը կարող է չարաշահումների գործիք դառնալ:
- Խնդրահարույց է 26-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված կարգավորումն առ այն, որ երրորդ անձանց կողմից ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքը ենթակա չէ բռնագանձման, եթե վերջինս ապացուցում է, որ գույքը ձեռք է բերել օրինական եկամուտների օգտագործմամբ: Կարգավորումը մտահոգիչ է այն առումով, որ թիրախավորում է նաև այն անձանց, որոնք չեն հանդիսանում օրենքի իմաստով «պաշտոնատար անձ»՝ դրանով իսկ ստեղծելով անորոշ շրջանակի անձանց հիմնական իրավունքների միջամտության լայն հնարավորություն:
- Նախագծի 28-րդ հոդվածում սահմանվում են գույքը պետության տիրապետությանը հանձնելու դեպքերը և առանձնահատկությունները, սակայն արտացոլված չէ միջազգային պրակտիկայում կիրառվող հնարավոր վնասների առավելագույն կրճատման սկզբունքը, այն դեպքերի համար, երբ գույքի բնույթով պայմանավորված առաջ են գալիս դրա պահպանման, կառավարման, իրացման և նմանաբնույթ այլ խնդիրներ:
- «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի ժամանակ նախատեսվում է

մարդու հիմնական իրավունքները սահմանափակող այնպիսի օպերատիվ-հետախուզական միջոցառումների կիրառում, ինչպիսիք են՝ ներքին դիտումը, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, հեռախոսային խոսակցությունների վերահսկումը և ֆինանսական տվյալների մատչելիության ապահովումն ու ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկումը: Մինչդեռ գործող օրենքով նշված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարող են իրականացվել միայն այն անձանց նկատմամբ, ովքեր կասկածվում են ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է: Այս առումով, գործ ունենք մարդու սահմանադրական իրավունքների էական սահմանափակման հետ, որոնց համաչափությունը Նախագծի հիմնավորումներում գնահատված չէ:

3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1. Միջազգային իրավական կարգավորումները

Հայաստանի Հանրապետությունում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքի ներդրման անհրաժեշտությունը, ի թիվս այլ հանգամանքների, հիմնավորվել է մի շարք միջազգային փաստաթղթերով.

- Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիա¹⁵, որին ՀՀ-ն առանց որևիցե նախապայմանների անդամակցել է 2007թ.,
- «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագանձման մասին» Եվրոպայի խորհրդի 1990թ. կոնվենցիա¹⁶, լրացված՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագանձման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 2005թ. կոնվենցիայով¹⁷,
- ՖԱԹՖ-ի (Ֆինանսական հարցերով աշխատանքային խումբ) 4-րդ հանձնարարական,
- Համաշխարհային բանկի «Գողացված ակտիվների վերականգնում» նախաձեռնության կողմից հրապարակված «Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ներդրման սկզբունքների ուղեցույց»,

¹⁵ Հայերեն տեքստի համար տե՛ս ՀՀԱԳՆՊՏ 2008.02.11/9(17):

¹⁶ Հայերեն տեքստի համար տե՛ս ՀՀԱԳՆՊՏ 2004.11.26/6(14):

¹⁷ Հայերեն տեքստի համար տե՛ս ՀՀԱԳՆՊՏ 2008.12.30/10(18): Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2008թ. հոկտեմբերի 1-ին:

- Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից 2015 թվականին հաստատված ՖԱԹՖ-ի հանձնարարականների ներդրման նպատակով 5-րդ փուլի գնահատման հաշվետվություն¹⁸, որով ամրագրվել է, որ Հայաստանի Հանրապետությունը հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագանձման պրակտիկան բարելավելու նպատակով պետք է դիտարկի առանց մեղադրական դատավճռի առկայության բռնագանձման ինստիտուտների ներդրման հարցը:
- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից 2018 թվականին հաստատված ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիային Հայաստանի Հանրապետության համապատասխանության 4-րդ փուլի գնահատման հաշվետվություն¹⁹, որով արձանագրվել է, որ Հայաստանի Հանրապետությունում չի ներդրվել առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը: Հաշվետվությամբ Հայաստանի Հանրապետությանը կոչ է արվել ներդնել կոնվենցիայով նախատեսված նոր գործիքները, այդ թվում՝ վերոհիշյալ ինստիտուտը՝ քրեական գործերի քննության արդյունավետության բարձրացման նպատակով:
- Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին 1988թ. ՄԱԿ-ի կոնվենցիան²⁰, որի 5-րդ հոդվածի 7-րդ մասը առաջին անգամ միջազգային մակարդակով ամրագրել է ենթադրյալ եկամուտների կամ բռնագանձման ենթակա այլ սեփականության օրինական ծագումն *ապացուցելու բեռի տեղափոխումն* ապահովելու հնարավորությունը:
- Ապացուցման բեռը շրջելու հնարավորություն են նախատեսում նաև Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի 2000թ. կոնվենցիայի²¹ 12 -րդ հոդվածի 7-րդ մասը, Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 8-րդ մասը:
- Միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում խոսվում է առավելապես հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագանձման ընթացակարգ և մեխանիզմներ ներդնելու մասին՝ առանց մանրամասնելու դրանց բնույթը: Մինչդեռ, **առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտն առավելապես**

¹⁸Տե՛ս

https://www.cba.am/Storage/AM/downloads/FDK/Evaluation%20Reports/mutual_evaluation_report_fifth_arm.pdf, էջ 62 և էջ 90, կետ 191:

¹⁹ Տե՛ս <https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf>

²⁰ Հայերեն տեսքի համար տե՛ս ՀՀԱԳՆՊՏ 2012.12.28/14(22): Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993թ. դեկտեմբերի 12-ից:

²¹ Հայերեն տեսքի համար տե՛ս ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/4(12): Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2003թ. սեպտեմբերի 29-ից:

ներպետական նախաձեռնություն է և միջազգային փաստաթղթերով ուղղակիորեն նախատեսված չէ²²: Այս առումով, թերևս միակ հատկանշական փաստաթուղթը **ԵԽ խորհրդարանական վեհաժողովի** կողմից 2018թ. ապրիլի 26-ին ընդունված **բանաձևն**²³ է, որտեղ անդամ **պետություններին կոչ է արվել նախատեսել առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը** իրենց ազգային օրենսդրություններում (կետ 9)՝ պայմանով, որ ապահովված լինի.

- բռնագանձման վերաբերյալ որոշում կայացնելու կամ ակտիվները սառեցնելու պահից ողջամիտ ժամկետում անկախ և անկողմնակալ դատարանի կողմից լրիվ դատական վերանայման հնարավորություն,
- սխալի դեպքում անձանց փոխհատուցման տրամադրում,
- անվճար իրավաբանական խորհրդատվություն, եթե անձը չի կարող իրեն դա թույլ տալ,
- Հատուկ մասնագիտացված մարմնի ստեղծում՝ ակտիվների սառեցման և բռնագանձման հարցերով զբաղվելու համար, որը նվազագույնի կհասցնի այդ ակտիվների արժեզրկումը՝ մինչև դրանց ամբողջական բռնագանձումը և այլն:

²² Տե՛ս Arvinder Sanbei, “European Court on Human Rights jurisprudence and civil recovery of illicitly obtained assets (confiscation in rem)”, TECHNICAL PAPER, May 2012, Project on Criminal Assets Recovery in Serbia CAR SERBIA, ECU/CAR-02/2012, էջ 4 (<https://rm.coe.int/16806ebc98>):

²³ Resolution 2218 (2018)1 Fighting organised crime by facilitating the confiscation of illegal assets: Բանաձևի ընդունմանը նախորդած ԵԽ Իրավական հարաբերությունների և մարդու իրավունքների հանձնաժողովի 2018թ. մարտի 26-ի թիվ 14516 զեկույցը մանրամասն վերլուծություն է պարունակում այս ինստիտուտի վերաբերյալ (Տե՛ս Fighting organised crime by facilitating the confiscation of illegal assets, Doc. 14516, 26 March 2018, Report, Committee on Legal Affairs and Human Rights, Rapporteur: Mr Mart van de VEN, Netherlands, Alliance of Liberals and Democrats for Europe):

3.2. Առանձին երկրների փորձառությունը²⁴

Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ երկրների մեծամասնության օրենսդրություններով հանցագործության կատարման արդյունքում ստացված գույքի (ապօրինի ծագում ունեցող) բռնագանձման համար նախատեսված է 2 ընթացակարգ. բռնագանձում քրեական գործի շրջանակներում, համապատասխան մեղադրական դատավճռի հիման վրա (Conviction-based (or criminal) confiscation) կամ առանց մեղադրական դատավճռի (non-conviction-based (or administrative) confiscation) գույքի բռնագանձում: Այս երկու ընթացակարգերի գլխավոր տարբերությունը կայանում է հետևյալում.

Գույքի բռնագանձում քրեահրավական ընթացակարգով	Գույքի բռնագանձում քաղաքացիահրավական ընթացակարգով
Բռնագանձման վարույթը ուղղված է՝	
անձի դեմ և իրականացվում է քրեական գործի շրջանակներում:	գույքի դեմ և իրականացվում է քաղաքացիական դատավարության ընթացակարգով:
Բռնագանձման գործընթացի իրականացման ժամանակահատվածը՝	
քրեական գործի ընթացքում՝ որպես դատարանի կողմից դատավճռով սահմանված պարբերական մաս:	կարող է իրականացվել ինչպես քրեական գործի ընթացքում, այնպես էլ դրանից հետո կամ առանց քրեական գործ հարուցելու:
Հակաօրինական վարքագծի ապացուցումը	
Անհրաժեշտ է ապացույցների հստակ շրջանակ, որի հավաքման պարտականությունը կրում է մեղադրող կողմը, որոնց հիման վրա դատարանը կայացնում է մեղադրական դատավճիռ:	Անձի հակաօրինական վարքագիծը և գույքի ապօրինի ծագումը ապացուցվում է «ավելի հավանական է, քան» սկզբունքի հիման վրա և չափ հաճախ ապացուցման բեռը պետությունից անցնում է քաղաքացուն:

Ապօրինի ծագում ունեցող գույքի՝ առանց մեղադրական դատավճռի բռնագանձման ինստիտուտի միջազգային փորձի ուսումնասիրության համար դիտարկվել են եւս անդամ երկրներից Վրաստանի, Գերմանիայի Դաշնային

²⁴ Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը, ըստ երկրների, արդեն իսկ բավարար մանրամասնությամբ ներկայացված է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» նախագծին կից հեղինակների կազմած տեղեկանքում, ուստի սույն տեղեկանքում անդրադարձ կկատարվի միայն միջազգային փորձի այն ասպեկտներին, որոնց հեղինակների կողմից անդրադարձ չի կատարվել:

Հանրապետության, Իռլանդիայի, Իտալիայի, Նիդեռլանդների, Մեծ Բրիտանիայի²⁵ և Բուլղարիայի փորձը: Տվյալ երկրներում ներդրվել է ապօրինի ձեռք բերված գույքի արտադատական կարգով բռնագանձման օրենսդրություն՝ իջեցնելով անբացատրելի ծագման հարստության քրեական ծագումը ապացուցելու հարցում պետական մարմինների ապացուցման բեռը՝ կիրառելով փաստական ենթադրությունների կանխավարկածը կամ առանձին դեպքերում՝ շրջելով ապացուցման բեռը:

Ընդհանուր առմամբ, առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը ընդհանուր իրավունքի համակարգի երկրներին է բնորոշ (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ավստրալիա, Կանադա, Ֆիջի, Նոր Զելանդիա, Հարավային Աֆրիկա, Իռլանդիա), իսկ մայրցամաքային իրավունքի համակարգի երկրներից (ինչպիսին է նաև ՀՀ-ն) նախատեսված է միայն Կոլումբիայում, Իտալիայում, Նիդեռլանդներում և Ֆիլիպիններում²⁶:

Վրաստանում²⁷ առանց մեղադրական դատավճռի հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագանձման ինստիտուտի իրավական կարգավորումը իրականացվում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ գլխով, որով սահմանվում են գույքի բռնագանձում իրականացնելու հիմքերը, գործընթացի փուլերը, ներգրավված մարմինները և այլն: Ըստ այդմ՝ Վրաստանում առանց մեղադրական դատավճռի բռնագանձման է ենթակա ավազակության, թրաֆիքինգի, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, հանցավոր խմբավորումների ստեղծման կամ մասնակցության հանցագործությունների արդյունքում ստացված գույքը: Սակայն, ի տարբերություն Նախագծի, որով գույքի ապօրինի ծագման ուսումնասիրություն սկսելու համար կան շատ լայն հիմքեր, Վրաստանի օրենսդրությամբ այդպիսի հիմքը միայն օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը նախատեսված է նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսգրքի § 76a-ի 4-րդ մասով, ըստ որի «ոչ իրավաչափ արարքի միջոցով ձեռք բերված իրը, որը թվարկված հանցագործություն կատարած լինելու կասկածի առթիվ հարուցված վարույթի շրջանակներում դրվել է կալանքի տակ, կարող է նաև այն ժամանակ առգրավվել, երբ կասկածվող անձը **չի կարող հեղափոխվել** հանցագործության համար կամ ենթարկվել պատասխանատվության: Եթե

²⁵ Տե՛ս Resolution 2218 (2018)1 Fighting organised crime by facilitating the confiscation of illegal assets, կետ 4: Այս երկրների փորձի մանրամասն նկարագրի համար տե՛ս Fighting organised crime by facilitating the confiscation of illegal assets, Doc. 14516, 26 March 2018, նշվ. աշխ., կետ 5-35:

²⁶ Տե՛ս Arvinder Sanbei, նշվ. աշխ., էջ 3:

²⁷ Վրաստանում առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի փորձի վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս կից հավելվածում:

որոշվում է առարկայի բռնագանձումը, ապա առարկայի սեփականությունը կամ դրա նկատմամբ իրավունքը որոշման ուժի մեջ մտնելուց հետո փոխանցվում է պետությանը: Հանցագործություններ են՝

- պետությանը վտանգող բռնի գործողության նախապատրաստումը,
- ահաբեկչության ֆինանսավորումը,
- ահաբեկչական միավորումների ստեղծումը,
- հանցավոր միավորումների ստեղծումը,
- մարդու առուվաճառքը,
- հարկադրաբար մարմնավաճառությունը և հարկադրաբար աշխատանքը,
- փողերի լվացումը և ապօրինի ձեռք բերված գույքի թաքցնելը,
- հարկերից խուսափումը և մաքսանենգությունը:

Բայց ինչպես երևում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսգրքի ձևակերպումից, այստեղ խոսքը վերաբերում է այնպիսի իրավիճակներին, երբ քրեական հետապնդումն անհնարին է:

3.3.Թիրախավորվող հանցագործությունների տեսակները

Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման վարույթի տեսանկյունից կարևոր է նախ հասկանալ, թե ինչպիսի հանցագործությունների համար են միջազգային փաստաթղթերը նախատեսում այս ընթացակարգի կիրառումը: Խոսքը, որպես կանոն, վերաբերում է հետևյալ հանցագործություններին՝

- փողերի լվացում,
- մարդկանց թրաֆիքինգ և անօրինական փոխադրում,
- մասնակցություն կազմակերպված հանցավոր խմբում և շորթում,
- ահաբեկչություն, ներառյալ՝ ահաբեկչության ֆինանսավորումը,
- սեռական շահագործում, ներառյալ՝ երեխաների սեռական շահագործումը,
- թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառություն,
- զենքի ապօրինի շրջանառություն,
- գողացված և այլ իրերի ապօրինի շրջանառություն,
- կոռուպցիա և կաշառակերություն,
- խարդախություն,
- դրամի կեղծում,
- ապրանքների կեղծում և հեղինակային իրավունքի խախտում,
- բնապահպանական հանցագործություններ,
- սպանություն, ծանր մարմնական վնասվածքների պատճառում,
- մարդկանց առևանգում, ազատության անօրինական սահմանափակում և պատանդառություն,

- կողոպուտ կամ գողություն,
- մաքսանենգություն,
- դրամաշորթություն,
- փաստաթղթերի կեղծում,
- հեղինակային իրավունքի խախտում,
- ներքին առևտուր և շուկայական մեքենայություն,
- այլ ծանր հանցատեսակներ²⁸:

3.4. Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ընթացակարգը միջազգային պրակտիկայում

Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ կոնվենցիայի 54-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն՝ անդամ պետությունը կարող է «քննարկել այնպիսի միջոցներ ձեռնարկելու հարցը, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման համար հնարավորություն ստեղծվի՝ *առանց այնպիսի գործերով քրեական վարույթի շրջանակներում դատավճիռ կայացնելու, երբ հանցագործը (անգլ. տեքստում՝ offender) չի կարող հետապնդվել մահվան, թաքնվելու կամ բացակայելու պատճառով կամ համապատասխան այլ դեպքերում*»:

Հոդվածի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձում կարող է իրականացվել, եթե **անձի քրեական հետապնդման հնարավորությունը բացակայում է** կա՛մ անձի մահվան, կա՛մ քրեական հետապնդումից դիտավորյալ խուսափելու պատճառով՝ թաքնվելու, նրա բացակայության կամ համանման այլ դեպքերում:

Հարկ է նկատել, որ չնայած առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի հանդեպ միջազգային հետաքրքրությանը՝ որպես հանցավորության դեմ պայքարի հեշտ մեխանիզմի, ներպետական օրենսդրություններում բռնագանձման առավել ընդունելի և տարածված մեխանիզմը շարունակում է մնալ քրեական վարույթը, որի վերջնարդյունքը դատարանի կողմից կայացված դատավճիռն է, որով հաստատվում է գույքի հանցավոր ծագումը: Եես փորձագետը Սերբիայի մասով այս հարցի շուրջ պատրաստված իր զեկույցում նույնպես ընդգծել է, որ սա պետք է լինի նախընտրելի մոտեցումը այն բոլոր դեպքերում, երբ բնականոն քրեական վարույթը հնարավոր է: Մինչդեռ, առանց մեղադրական դատավճռի բռնագրավումը պետք է դիտարկել **բացառիկ միջոց** այն դեպքերի համար, երբ **քրեական հետապնդումն անհնարին**

²⁸ Տե՛ս, օրինակ, «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 2005թ. Եես կոնվենցիա, 3-րդ հոդված, 3-րդ մաս և հավելված:

կամ դժվար է մի շարք հանգամանքների պատճառով, որոնք թույլ են տալու անձին խուսափել քրեական հետապնդումից՝

- անձը մահացել է,
- անձը փախուստի է դիմել՝ իր գույքը այլ անձանց անուններով ձևակերպելով կամ վաճառելով,
- քրեական վարույթը խաթարվել է, խափանվել է,
- անձը գտնվում է այլ պետության տարածքում և հանձնումը հնարավոր չէ մի շարք հանգամանքների պատճառով կամ պետությունը հրաժարվում է հանձնել անձին²⁹:

Ինչպես արդեն վերը նշվեց, նույնական է նաև մոտեցումը Գերմանիայի քրեական օրենսգրքում:

Այն, որ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը միայն բացառիկ միջոց է և ոչ քրեական վարույթին փոխարինող այլընտրանք, հստակ երևում է նաև ԵԽ խորհրդարանական վեհաժողովի բանաձևի համար հիմք հանդիսացած ԵԽ հատուկ զեկուցողի վերը նշված զեկույցում տարբեր երկրների փորձառության ներկայացումից³⁰: Նույն Իռլանդիայում, որտեղ ներդրված է առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը, երբ բավարար են քրեական դատապարտման համար ապացույցները, նախապատվություն է տրվում քրեական վարույթի այդ ռեժիմին³¹: Իտալիայում, որը այս ինստիտուտի կիրառման առաջամարտիկներից է եղել, նույնպես այն կիրառվում է խիստ սահմանափակ դեպքերում՝ հիմնականում մաֆիայի հետ կապված անձանց նկատմամբ: Վերը նշված *Walsh v UK*³² գործում առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը կիրառվել է անձի նկատմամբ, որը նախկինում ունեցել է հանցավոր մեծ պատմություն, որի համատեքստում դատարանը կասկածից դուրս է համարել գույքի ծագման հանցավոր լինելու հանգամանքը:

«Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների վաճման, հետախուզման, առգրավման ու բռնագանձման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի 2005թ.

²⁹ Ձեկույցում որպես հիմք նշվում է նաև ապացույցների անբավարարության պատճառով քրեական գործի կարճումը կամ արդարացումը, սակայն մեր կարծիքով այս հիմքը բավական խնդրահարույց է: Տե՛ս Arvinder Sanbei, նշվ. աշխ., էջ 3:

³⁰ Տե՛ս Fighting organised crime by facilitating the confiscation of illegal assets, Doc. 14516, նշվ. աշխ., կետ 6, 20, 23:

³¹ Տե՛ս Fighting organised crime by facilitating the confiscation of illegal assets, Doc. 14516, նշվ. աշխ., կետ 6:

³² Application no. 43384/05 (November 2006):

կոնվենցիայի³³ 1-ին հոդվածի «դ» կետը նույնպես **բռնագրավումը** սահմանում է որպես քրեական վարույթի տարր, այն է՝ «մեկ կամ մի քանի քրեական հանցանքի վերաբերյալ **դատական գործ հարուցելուն** հետևող և դատարանի կողմից սահմանվող պատիժ կամ պատժամիջոց, որը հանգեցնում է գույքի վերջնական կորստի»:

Եւս փորձագետը Սերբիայի մասով իր զեկույցում նշում է, որ առանց մեղադրական դատավճռի բռնագրավում կիրառելու դեպքում պետք է՝

- պահպանվեն ՄԻԵԴ-ի կողմից սահմանված օրինականության, անհրաժեշտության և համաչափության սկզբունքները.
- միջանկյալ և վերջնական որոշումները պետք կայացվեն դատարանի կողմից,
- թեև չպետք է ապացուցվի կոնկրետ հանցագործությունը, բայց դատարանը պետք է համոզված լինի, որ բռնագանձման ենթակա է հանցագործության արդյունքում ստացված գույք,
- պետք է հաշվի առնվեն բռնագանձման ենթակա գույքի նկատմամբ բոլոր սեփականատերերի իրավունքները,
- պետք է պաշտպանվեն անմեղ սեփականատիրոջ իրավունքները³⁴:

3.5. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մոտեցումը

Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձումը կարող է խնդիրներ առաջացնել ՄԻԵԴ-ի 6-րդ հոդվածի (արդար դատաքննության իրավունք և մասնավորապես՝ անմեղության կանխավարկած) և ՄԻԵԴ-ի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի (սեփականության պաշտպանություն) հետ:

Այս առումով, մեր կարծիքով, ՄԻԵԴ-ի պրակտիկան միանշանակ և հստակ չէ: Մի շարք գործերով ՄԻԵԴ-ը խախտումներ չի արձանագրել և գտել է, որ, առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագրավումը, ընդհանուր առմամբ, համադրելի է մարդու իրավունքների հետ³⁵, հետևյալ փաստարկներով.

³³

https://www.cba.am/Storage/AM/downloads/FDK/InternationalInstruments/warsaw_convention_on_amlcft_confiscation_arm.pdf, էջ 2:

³⁴ St' u Arvinder Sanbei, նշվ. աշխ., էջ 15:

³⁵ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Fighting organised crime by facilitating the confiscation of illegal assets, Doc. 14516, 26 March 2018, Report, Committee on Legal Affairs and Human Rights, Rapporteur: Mr Mart van de VEN, Netherlands, Alliance of Liberals and Democrats for Europe, կետ 43, Arvinder Sanbei, նշվ. աշխ., էջ 5:

ՄԻԵԴ գործերից տե՛ս Phillips v. the United Kingdom, Application No. 41087/98, judgment of 12 December 2001, Butler v. the United Kingdom, Application No. 41661/98, decision as to admissibility, 27 June 2002; Walsh v. United Kingdom, Application No. 43384/05, Decision as to admissibility, 21 November 2006; van Offeren v. The Netherlands, Application No. 19581/04, Decision as to admissibility, 5 July 2005; M. v. Italy, Application No. 12386/86, Commission decision, 15 April 1991:

- Չնայած, որ բռնագրավումը կարող է մեծ գումարների առնչվել, դա չի կարող որոշիչ հանգամանք լինել վարույթը քրեաիրավական դիտարկելու համար, քանի որ այն պատժիչ բնույթ չունի, դատարանը դրանով անձի մեղքը չի հաստատում, **այն չի կարող համարվել քրեական սանկցիա**, այլ կանխարգելիչ միջոց է՝ ուղղված ապօրինի և անձին օրինականորեն չպատկանող միջոցները շրջանառությունից հանելուն³⁶: Ուստի անմեղության կանխավարկածը այս պարագայում կիրառելի չէ:
- Քանի որ բռնագրավումը քրեաիրավական գործընթաց չէ, այն չպետք է ենթարկվի քրեական իրավունքին բնորոշ ապացուցման խիստ կանոններին:
- *Butler v. the United Kingdom* գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ թմրամիջոցների թրաֆիքինգը լուրջ խնդիր է անդամ պետությունների համար և նրանց քաղաքականությունը պետք է ունակ լինի հավասարակշռելու անհատի իրավունքները լայն իմաստով հանրության շահերի հետ: Այնքանով, որքանով, բռնագրավում իրականացնող պաշտոնատար անձանց լիազորությունների շրջանակը եղել է հստակ և ոչ հայեցողական, նրանց գործողությունները ենթակա են եղել դատական վերանայման՝ անձի սեփականության իրավունքի միջամտությունը անհամաչափ չի եղել:
- *Arcuri v. Italy*³⁷ գործով ՄԻԵԴ-ը մատնանշել է պետությունների լայն հայեցողությունը հանցավորության դեմ պայքարի քաղաքականության հարցում՝ նման բռնագանձման միջոցները համարելով դրանց դեմ պայքարի համար, երբեմն, առանցքային և համաչափ ՄԻԵԴ-ի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված սեփականության իրավունքին:

Միաժամանակ, *Geerings v. The Netherlands*³⁸ գործում ՄԻԵԴ-ը անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում է արձանագրել, երբ անձի գույքի բռնագանձման վերաբերյալ որոշում է կայացվել այն բանից հետո, երբ քրեական վարույթում նա արդարացվել է ապացույցների անբավարարության պատճառով:

Այսպիսով, ՄԻԵԴ-ի ընդհանուր մոտեցումն այն է, որ գույքի քաղաքացիաիրավական բռնագանձումը (*forfeiture in rem*) համահունչ է մարդու իրավունքների հետ, քանի դեռ իրավասու մարմինները ողջամտորեն ցույց են տալիս, որ գույքը ունի քրեական ծագում, և թիրախավորված անձին հնարավորություն են տալիս անկախ և անկողմնակալ դատարանի առջև

³⁶ *St' u Walsh v UK*, Application no. 43384/05 (November 2006), *Butler v. the United Kingdom*, Application No. 41661/98, *Porter v. the United Kingdom*, (dec.), no. 15814/02, 8 July 2003:

³⁷ Application No. 52024/99, Decision on admissibility of 5 July 2001:

³⁸ Application No. 3081/03, judgment of 1 March 2007:

արդարացի դատաքննության ընթացքում վիճարկելու գույքի ծագման հանցավոր լինելու փաստական ենթադրությունը³⁹:

4. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

1. Միջազգային փաստաթղթերը ուղղակիորեն չեն նախատեսում առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտ ներդնելու պահանջ: Այս ինստիտուտը զարգացել է առավելապես ներպետական նախաձեռնությունների հիման վրա՝ ներպետական օրենսդրություններում: Միակ բացառությունը ԵԽ պառլամենտական վեհաժողովի 2018թ. ապրիլի 26-ի բանաձևն է⁴⁰, որով անդամ պետություններին կոչ է արվել նախատեսել առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը:
2. Առանց մեղադրական դատավճռի բռնագրավումը միջազգային պրակտիկայում հանդիսանում է խիստ որոշակի շրջանակի առանձնապես բարձր հանրային վտանգավորություն ունեցող հանցագործությունների դեմ պայքարում որպես բացառիկ միջոց, երբ քրեական հետապնդումն անհնարին է անձի մահվան կամ անձի մեղքով առաջացած հանգամանքների պատճառով: Ըստ այդմ՝ գույքի բռնագանձման հնարավորություն նախատեսող հանցագործությունների շրջանակը պետք է լինի խիստ սահմանափակ՝ իրավամբ հանրային լուրջ վտանգ ներկայացնող արարքներով պայմանավորված, որպեսզի արդարացված և համաչափ լինի մարդու իրավունքների և քրեադատավարական երաշխիքների նկատմամբ ծայրաստիճան լայն միջամտությունը:
3. Որքան էլ, որ վկայակոչվեն ՄԻԵԴ-ի դատական պրակտիկան, այլ երկրների փորձն ու միջազգային փաստաթղթերի նորմերը, առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը ներդնելիս ՀՀ-ն պարտավոր է պահպանել իր Սահմանադրության պահանջները, մասնավորապես՝ 60-րդ հոդվածով նախատեսված սեփականության և 66-րդ հոդվածով նախատեսված անմեղության կանխավարկածի հիմնական իրավունքները:

³⁹ Fighting organised crime by facilitating the confiscation of illegal assets, Doc. 14516, նշվ. աշխ., կետ 45:

⁴⁰ Resolution 2218 (2018)1 Fighting organised crime by facilitating the confiscation of illegal assets:

5. ՀԱՎԵԼՎԱԾ

5.2. Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման օրենսդրական կարգավորումների համեմատական վերլուծություն (Հայաստան և Վրաստան)

Ներածություն

- Վրաստանի օրենսդրությունում գույքի բռնագանձում նախատեսող օրենսդրական կարգավորումները ներդրվել են 2004 թվականին: Սկզբնական շրջանում այս ինստիտուտի մեխանիզմները սահմանվել և իրականացվել են քրեական և վարչական դատավարության օրենսգրքերի համաձայն: Քրեական դատավարության օրենսգրքով գույքի բռնագանձումը նախատեսվել էր որպես քրեաիրավական պատժատեսակ, որը նշանակվում էր մեղադրական դատավճռի հիման վրա: Վարչական դատավարության օրենսգրքով կարգավորվող բռնագանձումը իր էությամբ կանխարգելիչ միջոցառում էր, որի նպատակն էր տնտեսական շրջանառությունից հանել և օրինական սեփականատերերին, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ պետությանը վերադարձնել հանրային ծառայողների, ինչպես նաև նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից հանցավոր ճանապարհով ստացված գույքը:
- 2007 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ներդրվեց գույքի բռնագանձման նոր ինստիտուտ՝ քաղաքացիական դատավարության կարգով ապօրինի ճանապարհով ստացված գույքի բռնագանձում:

Բռնագանձման հայց հարուցելու իրավասու մարմինը

- Վրաստանի Հանրապետությունում առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ գլխի 356¹-356⁷-րդ հոդվածներով: Օրենսգրքի 356² հոդվածի համաձայն՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման համար դատարան հայց ներկայացնելու իրավասու մարմինը դատախազությունն է: Վրաստանի Սահմանադրության 81.4-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունը ներառված է արդարադատության նախարարության կազմում և դատախազության ընդհանուր կառավարումը իրականացնում է արդարադատության նախարարը: Դատախազության լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում են օրենքով: Դատախազության մասին օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ դատախազը քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջով հայց է ներկայացնում դատարան:

- Համեմատելով Վրաստանում և Հայաստանում առկա կարգավորումներն, կարելի է արձանագրել, որ.
 - Վրաստանում դատախազության լիազորությունները սահմանվում են օրենքով: Դատախազության մասին Վրաստանի օրենքում հստակ սահմանված է դատախազի լիազորությունը գույքի բռնագանձման հայց ներկայացնելու համար:
 - Ի տարբերություն Վրաստանի Սահմանադրության՝ ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածով հստակ սահմանված են դատախազության լիազորությունները, որոնցից չեն բխում Նախագծով առաջարկվող լիազորությունները:

Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի տեսանկյունից թիրախավորվող հանցագործությունները

- Վրաստանի օրենսդրությամբ բռնագանձման է ենթակա ռեկետի (եկամուտ կամ այլ գույք ստանալու նպատակով կրկնվող և կազմակերպված հանցավոր գործունեություն), թրաֆիքինգի, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, հանցավոր խմբավորումների ստեղծման կամ մասնակցության հանցագործությունների արդյունքում ստացված գույքը:
- «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի նախագծով թիրախավորվող հանցատեսակները շատ ավելի լայն են:

Բռնագանձման վարույթ սկսելու (ուսումնասիրության) հիմքերը

- Վրաստանի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 356² հոդվածով հստակ սահմանված է, որ դատախազը դատարան գույքի բռնագանձման հայց ներկայացնելու իրավունք ունի, օրենսգրքով նախատեսված հանցատեսակների համար անձի նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո 10 տարվա ընթացքում:
- «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազությանը տրված է շատ լայն շրջանակ անձի գույքի օրինականության վերաբերյալ ուսումնասիրություն սկսելու համար: Նշենք, որ Վրաստանի օրենսդրությամբ այդպիսի հիմքը միայն օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Ապացուցման բեռը

- Վրաստանի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 356³ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը գույքը ճանաչում է ռեկետի արդյունքում ձեռք բերված, եթե դատավարության ընթացքում համապատասխան ապացույցների

հիման վրա պարզվում է, որ գույքը ձեռք է բերվել ռեկետի կամ ռեկետի արդյունքում ստացված այլ գույքից, կամ բացակայում են ապացույցները, համապատասխան փաստաթղթերը, որոնք կհիմնավորեն գույքի օրինական ծագումը: Տվյալ դեպքում հայց ներկայացնողը, այսինքն՝ դատախազությունը, պարտավոր է դատարանին ներկայացնել ապացույցներ, որ գույքը անձի կողմից ձեռք է բերվել ռեկետի արդյունքում: Նմանատիպ մոտեցում է դրսևորված նաև այլ հանցատեսակների արդյունքում ներկայացվող հայցերով: Գույքի սեփականատիրոջ համար սահմանված է գույքի օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ փաստաթղթեր ներկայացնելու պարտականություն (հոդված 356³ կետ 3):

- «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի նախագծում ապացուցման հիմքում դրված է, որ բոլոր փաստերը ապացուցվում են «հավանականությունների հավասարակշռման ապացուցողական չափանիշով»: Նման ինստիտուտը ներմուծվում է անգլոսաքսոնական իրավական համակարգից և մեր իրավական համակարգին հայտնի չէ, չկա համապատասխան իրավակիրառ պրակտիկա, ինչի արդյունքում անխուսափելիորեն առաջ են գալու հիմնական իրավունքների խախտման ռիսկեր:

ՄԻԵԴ վճիռը (GOGITIDZE AND OTHERS v. GEORGIA⁴¹)

- 2004թ. Աջարիայի ինքնավար պետության ներքին գործերի նախարարի նախկին տեղակալը (Anzor Gogitidze) (այսուհետ՝ Հայցվոր) մեղադրվել է պաշտոնական լիազորությունների չարաշահման և շորթման մեջ: Նույն թվականի օգոստոս ամսին դատախազության կողմից ընդդեմ Հայցվորի Աջարիայի դատարան է ներկայացվել հայց՝ անօրինական և չհիմնավորված գույքի բռնագանձման պահանջով: Հայցի հիմքում ընկած էին քրեական դատավարության և վարչական դատավարության օրենսգրքերի համապատասխան հոդվածները: Ինչպես արդեն հիշատակվել էր, այդ ժամանակահատվածում գույքի բռնագանձման ինստիտուտը Վրաստանում կարգավորվում էր քրեական դատավարության և վարչական դատավարության օրենսգրքերով: Դատախազության հիմնական փաստարկը այն էր, որ Հայցվորը, լինելով պետական պաշտոնյա, այդ ժամանակահատվածում ստացել էր ընդամենը 1,644 և 6,023 եվրո աշխատավարձ, սակայն նրա և նրա ընտանիքի անդամների գույքը գնահատվում էր 450 000 եվրո: Ընտանիքի անդամները նույնպես չէին կարողացել ներկայացնել ապացույցներ, որը կհիմնավորեր իրենց օրինական եկամուտը այդպիսի գույք ունենալու համար: Աջարիայի դատարանը գտել էր, որ գույքի

⁴¹ CASE OF GOGITIDZE AND OTHERS v. GEORGIA (Application no. 36862/05
[https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:\[%22001-154398%22\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-154398%22]})

ծագումը հիմնավորված և օրինական չէ, ինչի արդյունքում էլ կայացվել էր գույքի բռնագանձման վճիռ:

- Դիմելով սահմանադրական դատարան՝ Հայցվորը նշել էր, որ քրեական դատավարության և վարչական դատավարության օրենսգրքերի համապատասխան հոդվածներով իր գույքի բռնագանձման արդյունքում խախտվել է իր Սահմանադրությամբ երաշխավորված՝ խտրականության արգելքի, սեփականության իրավունքի և անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժ չունենալու իրավունքները: 2005 թ. կայացրած որոշմամբ⁴² Վրաստանի սահմանադրական դատարանը արձանագրել էր.
 - Վրաստանի Սահմանադրության 21-րդ հոդվածը, որով երաշխավորվում է մարդու սեփականության իրավունքը, չի բացառում մարդուն գույքից զրկելու հնարավորությունը, եթե դա կատարվել է օրենքի հիման վրա, համապատասխանել է համաչափության սկզբունքին, ինչպես նաև բխել է հանրության շահերից:
 - Վարչական դատավարության կարգով իրականացված բռնագանձումը իր մեջ չի պարունակում քրեական տարր, այլ ընդհակառակը՝ դա իրենից ներկայացնում է պետության և անհատի միջև դասական քաղաքացիական վեճ:
- Անդրադառնալով անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունենալու և անմեղության կանխավարկածի իրավունքին՝ սահմանադրական դատարանը նշել էր, որ գույքի բռնագանձումը իրականացվել է քաղաքացիական, այլ ոչ թե՛ քրեական կարգով, այսինքն՝ տվյալ իրավունքները այս պարագայում կիրառելի չեն:
- ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ ՄԻԵԿ-ի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված սեփականության պաշտպանության իրավունքը բաղկացած է 3 հիմնական կանոններից. անձի իր գույքից անարգել օգտվելու ընդհանուր իրավունքը, անձը կարող է զրկվել իր գույքից միայն ի շահ պետության և միայն օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով և նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:
- ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ կողմերը չեն վիճարկում այն փաստը, որ գույքի բռնագանձման արդյունքում խախտվել է Հայցվորի իր գույքից անարգել

⁴² CASE OF GOGITIDZE AND OTHERS v. GEORGIA (Application no. 36862/05, paragraph 1, point D

օգտվելու իրավունքը, հետևաբար ՄԻԵԿ-ի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման վիճարկումը տեղին չէ:

- Դատարանը վերահաստատել է իր նախկին գործերով արտահայտած դիրքորոշումն առ այն, որ գույքի բռնագանձումը քաղաքացիական դատավարության ընթացակարգով իրականացնելը՝ այնպիսին, ինչպիսին տեղի է ունեցել տվյալ գործում, որը չի բխում քրեական դատավճռից կամ քրեական դատավճիռ կայացնելու դատավարությունից, չի կարող դիտվել որպես պատիժ, այլ իրենից ներկայացնում է ՄԻԵԿ-ի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացում: Այս համատեքստում գույքի բռնագանձման որոշումը անձի նկատմամբ չի կարող դիտարկվել որպես նրա նկատմամբ կայացված քրեական դատավճիռ:
- Դատարանը վերահաստատել է իր նախկին գործերով արտահայտած դիրքորոշումը առ այն, որ քաղաքացիական դատավարության կարգով իրականացված գույքի բռնագանձումը, որը չի կատարվել մեղադրական դատավճռի հիման վրա, չունի անձին պատժելու նպատակ, այլ ունի կանխարգելիչ և փոխհատուցման բնույթ և այդ հիմնավորումներով չի կարող առաջացնել ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, այն է՝ անմեղության կանխավարկածի իրավունքի խախտում:

5.3. Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման օրենսդրական կարգավորումների համեմատական վերլուծություն (Հայաստան և Բուլղարիա)

Ներածություն

- Բուլղարիայում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման օրենսդրական մեխանիզմները սկիզբ են առնում 2005թ. ուժի մեջ մտած «Հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագանձման մասին» օրենքով⁴³:
- Հիշյալ օրենքը 2012թ. ճանաչվեց ուժը կորցրած, երբ ուժի մեջ մտավ «Հանցավոր ճանապարհով ստացված ակտիվների բռնագանձման մասին» օրենքը⁴⁴: Տվյալ օրենքով սահմանվում էին այն ակտիվները, որոնք համարվում են ապօրինի կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված, դրանց բռնագանձման համար վարույթ սկսելու հիմքերը, իրավասու մարմինը, նրան տրվող լիազորությունները և այլ կարգավորումներ:

⁴³ Անգլերեն անվանումը՝ Forfeiture of Criminal Assets Act, FCCA:

⁴⁴ Անգլերեն անվանումը՝ Forfeiture of Illegal Assets Act, FIAA:

- Ներկայումս ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը Բուլղարիայում իրականացվում է «Կոռուպցիայի կանխարգելման և ապօրինաբար ստացված գույքի բռնագանձման մասին» օրենքով⁴⁵:

Բռնագանձման հայց հարուցելու իրավասու մարմինը

- Ապօրինի ակտիվների բռնագանձման համար վարույթ հարուցելը վերապահված է Կոռուպցիայի կանխարգելման և ապօրինի ստացված գույքի բռնագանձման հանձնաժողովին, որը բաղկացած է 5 անդամներից՝ ներառյալ նախագահը և նրա տեղակալը: Հանձնաժողովի կազմը ձևավորվում է հետևյալ կերպ. խորհրդարանը ընտրում է հանձնաժողովի նախագահին, իսկ այնուհետև հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ՝ մնացած անդամներին:

Բռնագանձման վարույթ սկսելու հիմքերը և վարույթի տևողությունը

- Օրենքի համաձայն՝ բռնագանձման վարույթ սկսելու հիմքերից մեկը քրեական օրենսգրքի համապատասխան հանցատեսակներով (նախատեսված է բավական լայն հանցատեսակների ցանկ) հարուցված քրեական գործում մեղադրյալի ակտիվների անհամապատասխանության վերաբերյալ ողջամիտ կասկածն է (հոդված 107 և 108):
- Բռնագանձման վարույթ կարող է սկսվել նաև այն դեպքում, երբ անձը նշված հանցատեսակների հիմքով չի կարող ներգրավվել որպես մեղադրյալ համաներման, վաղեմության ժամկետը անցնելու, անձի մահվան և այլ դեպքերում (հոդված 108, 2-րդ մաս):
- Բռնագանձման վարույթ սկսելու հաջորդ հիմքը համապատասխան մարմնի կողմից Հանձնաժողովին ուղղված գրությունն է, որը պարունակում է տվյալներ այն անձի վերաբերյալ, ում կատարած վարչական իրավախախտման արդյունքում ստացված եկամուտները գերազանցում են մոտ 25 000 եվրոն (հոդված 109):
- Զուգահեռներ անցկացնելով Նախագծի և Բուլղարիայի օրենսդրության միջև բռնագանձման վարույթ սկսելու հիմքերի առումով՝ պարզ է դառնում, որ.
 - ✓ Ի տարբերություն նախարարության կողմից առաջարկվող Նախագծի՝ Բուլղարիայում բռնագանձման վարույթ սկսելու հիմքերը բավական հստակ են: Հիմքերի հստակ սահմանումը առաջին հերթին թույլ է տալիս խուսափել բռնագանձման վարույթ սկսելու կամայական որոշումներից և այն որպես պատժիչ գործիք օգտագործելուց:

⁴⁵ Օրենքի անգլերեն տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ [file:///C:/Users/h.odabashyan/Downloads/CounterCorruption_and_Unlawfully_Acquired_Assets_Forfeiture_Act%20\(2\).pdf](file:///C:/Users/h.odabashyan/Downloads/CounterCorruption_and_Unlawfully_Acquired_Assets_Forfeiture_Act%20(2).pdf):

- ✓ Բուլղարիայում վարույթի առավելագույն տևողությունը կազմում է 1 տարի, որը հատուկ դեպքերում կարող է երկարացվել 1 անգամ՝ առավելագույնը 6 ամիս ժամկետով (հոդված 112): Նախագծի 8-րդ հոդվածի համաձայն՝ այդ ժամկետը 2 տարի է և միջազգային հարցումների պատասխանների ստացմամբ պայմանավորված՝ կարող է երկարացվել ևս 1 տարով:
- ✓ Համեմատելով Նախագծի դրույթները Բուլղարիայում առկա կարգավորումների և դրանց վերաբերյալ միջազգային կառույցների տրված կարծիքների⁴⁶ հետ՝ ակնհայտ է դառնում, որ քաղաքացիական դատավարության կարգով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գլխավոր առավելություններից մեկը պետք է լինի դրա իրականացումը կարճ ժամանակահատվածում, որը Նախագծում բացակայում է:

Իրավասու մարմնի լիազորությունները

- Օրենքի 114-րդ հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովը և նրա տարածքային ներկայացուցիչները պետք է հավաքագրեն տեղեկատվություն՝
 - ✓ գույքի գտնվելու վայրի, նրա արժեքի, ձեռքբերման օրինականության վերաբերյալ,
 - ✓ գույքի շուկայական արժեքի վերաբերյալ՝ այն ձեռք բերելու ժամանակ,
 - ✓ գույքի շուկայական արժեքի ուսումնասիրության ժամանակ,
 - ✓ գույքի վերափոխումները,
 - ✓ ֆիզիկական անձի և նրա ընտանիքի անդամների անդամների եկամուտների և ծախսերի և այլ նմանատիպ տեղեկատվություն:
- Վերոհիշյալ տեղեկատվության ստացումից հետո Հանձնաժողովը իրավունք ունի՝
 - ✓ առաջարկել գույքը տիրապետող անձանց ներկայացնել ուսումնասիրության վերաբերյալ իրենց բացատրությունները կամ առարկությունները,
 - ✓ պահանջել տեղեկատվություն:
- Հանձնաժողովը անհրաժեշտության դեպքում նաև կարող է միջնորդություն ներկայացնել դատարան՝ ստանալու բանկային, կոմերցիոն և այլ գաղտնի տեղեկատվություն (հոդված 115):
- Ուսումնասիրության արդյունքները ամփոփելով՝ գույքի ծագման ապօրինի լինելու վերաբերյալ ողջամիտ կասկած ունենալու դեպքում, Հանձնաժողովը որոշում է կայացնում դիմել դատարան գույքի նկատմամբ նախնական ապահովման միջոց կիրառելու համար (հոդված 116):

⁴⁶ St'eu Council of the European Union, Analysis of non-conviction based confiscation measures in the European Union, Brussels, 12.4.2019 SWD(2019) 1050 final, էջ 7, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://data.consilium.europa.eu/doc/document/ST-8627-2019-INIT/en/pdf>:

- Տվյալ համատեքստում շատ մտահոգիչ է Նախագծով իրավասու մարմինն վերապահվող լիազորությունը, համաձայն որի՝ որոշակի փաստերի հաստատման կամ հերքման անհրաժեշտություն առաջանալու դեպքում վերջինս իրավասու է ներկայացնելու միջնորդություն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար (Նախագծի 11-րդ հոդված, 5-րդ մաս):
- Այս լիազորությունը հատուկ է քրեական վարույթին և Քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն վերապահվում է դատախազությանը նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելու շրջանակներում:
- Իրավասու մարմինն նման լիազորություն վերապահելը խախտում է բռնագանձման քաղաքացիաիրավական բնույթը և կողմերի սպառազինությունների հավասարության սկզբունքը (equality of arms):

Ապացուցման բեռը

- Հայցը դատարանում ներկայացնում է Հանձնաժողովի նախագահը կամ նրա կողմից լիազորված փաստաբանը:
- Հանձնաժողովի վրա է դրված հետևյալ փաստերի ապացուցման պարտականությունը (հոդված 156)՝
 - ✓ ուսումնասիրության ժամանակահատվածում ձեռք բերված գույքը և դրա արժեքը,
 - ✓ ուսումնասիրության համար հիմք հանդիսացած փաստերի առկայությունը,
 - ✓ անձի եկամուտների էական անհամապատասխանության առկայությունը,
 - ✓ այն հանգամանքները, որ երրորդ անձինք գիտեին կամ կարող էին ենթադրել գույքի ապօրինի ծագման մասին,
 - ✓ այլ հանգամանքներ, որոնք վերաբերվում են գույքի աղբյուրներին և դրանց ձեռքբերման եղանակներին:
- Եթե որևէ հանգամանքի ապացուցումը պետք է իրականացվի գրավոր փաստաթղթի միջոցով, այդ փաստաթղթի բացակայությունը չի կարող մեկնաբանվել ի վնաս որևէ կողմի, եթե ապացուցվի, որ այդ փաստաթուղթը չի ոչնչացվել տվյալ կողմի կողմից:
- Այս առումով, Նախագծով երրորդ անձանց վրա դրվում է անհամաչափ ապացուցման բեռ, անգամ, երբ նա չի իմացել կամ ողջամտորեն չէր կարող իմանալ գույքի ծագման ապօրինի լինելու մասին:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: